ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 փետրվարի 2017 թվականի N 153 - Ա

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի N 541-Ն որոշման 1-ին կետին համապատասխան՝

Հաստատել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. փետրվարի 21
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
փետրվարի 21 -ի N 153 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու համար պատասխանատու պետական կառավարման մարմնի անվանումը	Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը	Իրավական ակտն ընդունելու առնչությամբ իրականացվող միջոցառումների ֆինանսական ապահովման աղբյուրը	Իրավական հիմքը
1	2	3	4	5	6
1.	«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	2017 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ
2.	«Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ	ՀՀ ֆինանսների նախարարություն	2017 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 14-րդ կետեր

1	2	3	4	5	6
	կառավարության աշխատակազմ ներկայացնելը				
3.	«Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	2017 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ
4.	«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	2017 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ կետեր, ինչպես նաև 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր
5.	«Պետություն-մասնավոր գործընկերության գործարքների տեսակները, այդ գործարքների բնութագրերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև բնութագրերի կազմման և հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2017 թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ
6.	«Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավոր-ման պահանջները՝ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից գնահատելու կարգը	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)	2017 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ

1	2	3	4	5	6
	հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը				
7.	«Գնումների համակարգողների որակավորման շնորհման և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստման անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ֆինանսների նախարարություն	2017 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:	«Գնումների մասին» 16.12.2016 թ. ՀՕ-21-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ